ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1392

06.12.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,

գեներալ-լեյտենանտ

պարոն. Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Ի պատասխան Ձեր 29.11.2013թ-ին թիվ 2/2-1-3393 գրությանը, որը հանդիսանում է Դիտորդական խմբի սույն թվականի նոյեմբերի 1-ի թիվ 2621/1383 գրության մեկնաբանությունը, հայտնում ենք, որ Ձեր գրության երկրորդ կետի հետ Դիտորդական խումբը համամիտ չէ և խումբը չի պատրաստվում պարզաբանում ստանալ դատական դեպարտամենտից տվյալ իրավախախտման վերաբերյալ, քանի որ նշված իրավախախտումը կանոնակարգվում է <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով:

Այսպիսով խնդրում ենք ևս մեկ անգամ ուսումնասիրել ներկայացված փաստը և տալ մեկնաբանություն:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ № 1228
10 12 2013

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

<< Հասարակական Դիտորդական Խումբ
Մուտք թիվ 8324
10 12 2013թ.

Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-_____ <<____>> _____ 2013թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

ՀՀ ոստիկանությունում քննարկվել են Ձեր 01.11.2013թ. թիվ 2621/1383 գրության 2-րդ կետում նշված հանգամանքը, ինչպես նաև 06.12.2013թ. թիվ 2621/1392 գրությունը:

Հայտնվում է, որ ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ղեկավարներին համապատասխան հանձնարարական է տրվել խստագույնս հսկողություն սահմանել իրենց ենթակայության տակ գտնվող ՁՊՎ-ների գործունեության նկատմամբ և կալանավորված անձանց ՁՊՎ ընդունելիս ղեկավարվել <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի և <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի>> 7-րդ կետի պահանջներով՝ կալանավորվածներին ՁՊՎ ընդունել քննիչի, դատախազի կամ դատավորի որոշման հիման վրա:

ՀՀ ոստիկանության շտաբ